ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Առաջնորդվելով Սահմանադրության 108-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածը,

«Մենք ենք մեր սահմանները» համազգային դրամահավաքի շրջանակներում հավաքագրված միջոցներից 52,703,114,000 ՀՀ դրամը «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու և դրանք օգտագործելու վերաբերյալ, այս փուլում քննիչ հանձնաժողովին (հանձնաժողովի 30.11.2021թ. թիվ մեկ նիստում ընդունված որոշմամբ) անհրաժեշտ են հետևյալ տեղեկությունները (փաստաթղթերը).

1. Այն պետական մարմինների անվանումները և պաշտոնատար անձանց անունները, որոնք ներկայացրել են և/կամ հիմնավորել են նվիրաբերության կարգով նշված գումարը հիմնադրամից ներգրավելու առաջարկը (առկայության դեպքում), ինչպես նաև առաջարկը և դրա քննարկումը արձանագրող փաստաթղթերը (տեսաձայնագրությունները): Այս կետի ներքո տեղեկատվությունը պետք է պատասխանի նաև հարցին. թե ինչ՞ հիմնավորմամբ է որոշվել (առաջարկվել) հիմնադրամի միջոցներից ներգրավել նվիրատվություն (նվիրաբերություն):

2. Նվիրատվության (նվիրաբերության) պայմանագրերը:

3. Գանձապետական հաշվեհամարը բացելու, ինչպես նաև նվիրաբերության նշված գումարը գանձապետական հաշվեհամարին փոխանցելու (հաշվեհամարին մուտքագրելու) վերաբերյալ բոլոր իրավական ակտերը (նորմատիվ, անհատական և ներքին), ինչպես նաև վարչական ակտերը, նամակագրությունները, հանձնարարականները և/կամ այլ փաստաթղթերը:

Այս կետով ներկայացվող տեղեկատվության ներքո պետք է հստակ պատասխանել նաև հետևյալ հարցերին. Արդյո՞ք գանձապետական այս հաշվեհամարը բացվել է բացառապես նշված նվիրաբերության համար, հիմնադրամն ունի՞ Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացված գանձապետական հաշիվ, և եթե այո, ապա արդյո՞ք այդ հաշվեհամարից գումարներ են ելքագրվել կառավարության համար:

4. Գանձապետական նշված (նվիրաբերության գումարները մուտքագրելու համար բացված)հաշվեհամարի շարժը նկարագրող տեղեկանք (քաղվածք հաշվից)՝ հաշվեհամարի բացման պահից մինչև սույն կետով պահանջվող տեղեկատվություն տրամադրելու օրը: Սույն կետում նշված տեղեկությունը պետք է ներառի նաև հաշվեհամարի յուրաքանչյուր շարժի (մուտքի և ելքի) համար հիմք հանդիսացող առաջնային (սկզբնական) փաստաթղթերի տվյալները, ինչպես նաև շարժի արդյունքում ֆինանսական միջոցների ելքի հանրագումարը՝ տարանջատված մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը և 2021 թվականին՝ ըստ ամիսների:

5. Տեղեկանք գանձապետական նշված հաշվեհամարից 300 մլն. դրամ և ավելի մեկանգամյա կամ միմյանց փոխկապակցված փոխանցումների վերաբերյալ՝ նշելով գումարի մեծությունը, ծրագրի անվանումը և ստացողին:

6. Տեղեկատվություն այն ծրագրերի վերաբերյալ, որոնք իրականացնելու համար ծախսվել են հատկացված միջոցները՝ ներկայացնելով ծրագրի կատարման պատասխանատու պետական մարմնին, ծրագրի նկարագիրը, անվանումը, ծրագրով նախատեսված ֆինանսական և ոչ ֆինանսական, ինչպես նաև կատարողականի ցուցանիշները, ծրագրի սկզբի և ավարտի ամսաթվերը:

Այս կետի պահանջի ներքո պետք է ներկայացնել նաև տեղեկություն այն մասին, թե մինչև նշված ծրագրի հաստատումը արդյո՞ք համանման ծրագիր (ծրագրեր), ծախսեր նախատեսվել են ՀՀ 2020թ. պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեներով:

Եթե առկա են համընկնումներ, հարկ է պատասխանել նաև, թե ի՞նչ ուղղություններով (նպատակներով) են ծախսվել (վերաբաշխվել) բյուջեներում նախատեսված միջոցները:

7. Տեղեկություն նախորդ կետում նշված ծրագրերի իրականացման հսկողության համակարգի մասին՝ ծրագրի նախատեսված նպատակների և արձանագրված արդյունքների համապատասխանության վերաբերյալ հսկողություն իրականացնող մարմնի և պաշտոնատար անձի հաստատումները:

8. Նվիրաբերության պայմանագրերով ստացված միջոցների վերաբերյալ «Հայաստան» համահայկական հիմնադրամին ներկայացված հաշվետվությունները, դրանց վերաբերյալ տրված բացատրությունները, մասնագետների և/կամ փորձագետների, ինչպես նաև աուդիտորական կազմակերպության եզրակացությունները:

Սույն հարցմամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը կամ դրանց պատճենները (կրկնօրինակները) հարկ է ներկայացնել դրանք բնօրինակին համապատասխանելու հաստատումը հավաստող պաշտոնատար անձի ստորագրությամբ: Էլեկտրոնային կրիչները պետք է ապահովեն տեղեկատվության պաշտպանությունը՝ բացառելով երրորդ անձանց ապօրինի տիրապետման հնարավորությունը:

Ակնկալում ենք տեղեկատվության ստացումը հնարավորինս կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

01.12.2021թ.